

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՐԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ
ԳՆԱՐԱՏՈՒՄԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ
Ձեռնարկ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱԳՐԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ
ԳՆԱՅԱՏՈՒՄԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ
Ձեռնարկ

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը տարածքային մակարդակում: Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ. - Եր.: Զանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2018.- 150 էջ

Սույն ձեռնարկի նպատակը տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մասնագետների կողմից իրականացվող երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացին աջակցելն է:




Սույն ձեռնարկը տպագրվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտահայտեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները և քաղաքականությունը:

ՅՈՒՆԻՍԵՖ-ը երեխայի իրավունքների գծով համաշխարհային առաջատարն է, որի գործունեության նպատակն է՝ յուրաքանչյուր երեխայի համար ամենուրեք ապահովել հավասար հնարավորություններ՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենակարիքավոր և խոցելի երեխաներին:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործունեության մասին ավելին իմանալու համար կարող եք այցելել www.unicef.am և www.unicef.org կայքերը կամ հետևել մեզ հետևյալ սոցիալական հարթակներում՝

 [Facebook.com/UNICEFArmenia](https://www.facebook.com/UNICEFArmenia)

 [Instagram.com/UNICEF_Armenia](https://www.instagram.com/UNICEF_Armenia)

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը դպրոցական մակարդակում»

մեթոդական ուղեցույց

Մշակել են՝

- Լիլիթ Ասրյան
- Վարդուհի Կատինյան
- Զայկուհի Ադամյան
- Գայանե Զարությունյան
- Անի Գարեգինյան
- Լուսինե Զակոբյան
- Լիանա Մարգարյան
- Ռուզաննա Մուրադյան
- Զեդինե Մարգարյան
- Լիլիթ Չաքարյան
- Ռուզաննա Պետրոսյան

Մենք ուզում ենք, որ մեր երկրում
բոլոր երեխաների համար բաց լինեն
բոլոր դպրոցների և այլ կառույցների
դռները, և որ նրանք, իրենց ծնողների
ջերմությամբ ու աջակցությամբ
շրջապատված, վստահորեն փնտրեն,
գտնեն ու ապահովեն իրենց տեղն ու
դերը **հասարակության մեջ**:

Մարդիկ տարբեր են, դա բնական է, և այդ տարբերությունն էլ ցանկացած հասարակություն դարձնում է ավելի հարուստ, և, հետևաբար, այն պետք է իր արտացոլումը գտնի նաև դպրոցում: Դպրոցները պետք է ապահովեն բոլոր երեխաների մասնակցությունը՝ օգտագործելով տարբեր մոտեցումներ (այդ թվում՝ անհատական մոտեցումներ) ու հնարներ:

Երեխաների դժվարությունները կրթության մեջ կարող են շատ տարբեր լինել: Օրինակ, նրանք կարող են դժվարություններ ունենալ կարդալիս, գրելիս, թվերի հետ աշխատելիս կամ շրջապատող մարդկանց հետ հաղորդակցվելիս, որի համար նրանց պետք է օգնել՝ լրացուցիչ աջակցելով դպրոցում և համագործակցաբար աշխատելով ծնողների հետ: Երեխաների մի խմբի համար այդ դժվարությունները կարող են պայմանավորված լինել հաշմանդամությամբ, որը հանրակրթական ծրագրի յուրացումը դարձնում է ավելի բարդ: Որոշ երեխաների համար այդ խնդիրները ժամանակավոր դժվարություններ են հանդիսանում, մինչդեռ մյուսների համար դրանք կարող են լինել երկարատև և մշտական մասնագիտական աջակցություն պահանջող խնդիրներ:

Սույն ձեռնարկով մենք ձգտել ենք օգնել ուսուցիչներին, ծնողներին, դպրոցի և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության խմբի մասնագետներին հնարավորինս շուտ բացահայտել և աջակցել երեխաներին, որոնք ունեն ուսումնական ծրագրերի ճիշտ պլանավորման, միջավայրային հարմարեցումների և անհրաժեշտ մասնագիտական ծառայությունների տրամադրման կարիք:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան

6

Հասկացությունների և
եզրույթների բառարան

7

ՄԱՍ 1

Կրթության առանձնահատուկ
պայմանների կարիքի
գնահատման գործընթացը
Հայաստանի Հանրապետությունում

8

ՄԱՍ 2

Կրթության առանձնահատուկ
պայմանների կարիքի գնահատում.
դպրոցական մակարդակ

10

ՄԱՍ 3

Երեխայի գործունեության
գնահատման գործիք
(նկարագրություն և կիրառման կարգ)

13

Հավելված

16

ՄԱՍ 4

Գրականություն

47





ՆԱԽԱԲԱՆ

6

Կրթության մատչելիությունն ու հասանելիությունը, որպես հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական միջոց, ամրագրվել են դեռևս 1990-ականներին, երբ ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկրների կողմից ընդունվեցին «Երեխաների իրավունք-ների կոնվենցիան» (1989, ՄԱԿ) և «Կրթությունը բոլորի համար համաշխարհային հռչակագիրը» (2000, Դակար): 1994 թվականին աշխարհի 92 երկրների կառավարությունների ու 15 միջազգային կազմակերպությունների կողմից ստորագրված «Սալամանկայի հռչակագիրը» սահմանեց, որ յուրաքանչյուր երեխա ունի կրթական առանձնահատկություններ և կրթության հիմնարար իրավունք: Համաձայն այս հռչակագրի, կրթական ծրագրերը պետք է մշակվեն և իրականացվեն՝ հաշվի առնելով այդ առանձնահատկությունները: 2010 թվականին տեղի ունեցավ Հայաստանի կողմից

Հաշմանդամության ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի վավերացումը և 2015 թվականի զարգացումները, մասնավորապես կայուն զարգացման օրակարգի և նպատակների (ԿՁՆ) ընդունումը ՀՀ-ի կողմից, որոնք էլ ավելի ամրապնդեցին հատուկ կրթության համակարգի բարեփոխումները երկրում: ՀՀ-ն ազգայնացրել է նպատակները, ներառյալ ԿՁՆ 4-ը, դրանով իսկ ստանձնելով միջազգային պարտավորություններ ապահովելու դրանց կատարումը և պարբերական հաշվետվողականությունը¹:

«Կրթության մասին»² Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի թիվ ՀՕ-297 օրենքը սկիզբ դրեց հատուկ կրթության համակարգի բարեփոխումների ու ներառական կրթության հիմնադրման, որի հիմքում յուրաքանչյուր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն է,

¹ԿՁՆ չորս նպատակների /ԿՁՆ 1; 4;11;17/ 16 թիրախները վերաբերում են հաշմանդամության հիմնախնդիրներին: ԿՁՆ 4-ը կայուն զարգացման օրակարգի կրթությանը վերաբերող նպատակն է, որը կոչ է անում անդամ պետություններին մինչև 2030թ. -ը երաշխավորել հավասար և մատչելի կրթություն՝ կառուցելով ներառական կրթական միջավայր, ապահովելով անհրաժեշտ աջակցություն հաշմանդամություն ունեցող անձանց համար:

²«Կրթության մասին», ՀՀ օրենք, 6-րդ հոդված, մաս 6:

կրթության կազմակերպումն իր համայնքում՝ առանց ընտանիքից մեկուսացնելու, և կրթության գործընթացին երեխայի ակտիվ մասնակցության խրախուսման սկզբունքների ապահովումը: Որոշիչ է այն հարցը, թե ինչպես է առանձին վերցրած աշակերտի համար ապահովվում, որ նա ստանա իր կարողություններին

և կարիքներին համապատասխան որակյալ կրթություն³: Իսկ որակյալ կրթության ապահովման համար անհրաժեշտ է ուսումնական գործընթացում երեխային դիտել և գնահատել որպես անհատ՝ իր ընդունակություններով, կարողություններով, հետաքրքրություններով և դժվարություններով⁴:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը երեխայի զարգացման տարբեր փուլերում նրա մասին բազմաբնույթ տեղեկությունների հավաքագրման ու տվյալների համակարգման գործընթաց է, որն իրականացվում է երեխայի բնական միջավայրում՝ ապահովելու երեխայի ուսումնական ծրագրերի ճիշտ պլանավորումը, անհրաժեշտ մասնագիտական ծառայությունների և միջավայրային հարմարեցումների տրամադրումը⁵:

Չասկացությունների և եզրույթների բառարան

Կրթության առանձնահատուկ պայմաններ -

երեխայի հանրակրթական հիմնական ծրագրի յուրացմանը նպատակաուղղված առարկայական ծրագրերի և ուսուցման մեթոդների, ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի, ինչպես նաև՝ մանկավարժական, սոցիալական և այլ ծառայությունների ամբողջություն:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա -

ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ ունեցող երեխա, որի կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ:

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ -

ուսումնամեթոդական, հոգեբանական և մանկավարժական աջակցություն, որը ցուցաբերվում է սովորող երեխային, նրա ծնողին և մանկավարժական աշխատողին:

Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն -

երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատող, կրթությանն աջակցող մանկավարժ-հոգեբանական և այլ օժանդակող ծառայություններ մատուցող կազմակերպություն:

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում -

երեխայի կրթական ծրագրերին մասնակցության դիտարկման, երեխայի զարգացման հնարավորությու-

յունների բացահայտման և կրթության առանձնահատուկ անհրաժեշտ պայմանների սահմանման գործընթացների անհրաժեշտությունը:

Ֆինանսավորման բարձրացված չափաքանակ -

Չայաստանի Չանրապետության Կառավարության կողմից սահմանված ֆինանսավորման չափ, որն անհրաժեշտ է կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման համար:

Անհատական ուսուցման պլան -

հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթ, որը սահմանում է երեխայի կրթության կազմակերպման տարեկան նպատակը, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները (ներառյալ՝ աջակցող ծառայությունները):

Կանխարգելիչ միջամտությունների պլան -

երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթ, որը կիսամյակային կտրվածքով սահմանում է երեխայի կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ծառայությունների տրամադրման և միջավայրային հարմարեցումների վերաբերյալ գործողությունները (նպատակներ, դեպի այդ նպատակները տանող քայլեր, դասավանդման մեթոդներ, տեղի և դասասենյակի վերադասավորումներ, ժամանակի կազմակերպում և այլն):

³«Չանրակրթության մասին» ՀՀ օրենք, 4-րդ հոդված, կետ 2.1:

⁴«Չանրակրթության մասին» ՀՀ օրենք, մաս 1, 10.5-րդ կետ:

⁵«Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ», ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.04.2017թ. N370-Ս/2 հրամանի հավելված, 32-րդ կետ:



ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

8 |

Կրթության կազմակերպման մանկավարժա-հոգեբանական աջակցության ծառայությունների մասն է կազմում կրթության առանձնահատուկ պայմանների

կարիքի գնահատումը, որն իրականացվում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմաններ սահմանելու⁶ համար:

⁶«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, մաս 1, 10.1 կետ:

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն իրականացվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան և նպատակ ունի սահմանելու՝

1. երեխայի կրթության առանձնահատուկ պայմաններ՝ ապահովելով ծրագրային, մեթոդական և այլ միջավայրային անհրաժեշտ հարմարեցումներ,
2. ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում ֆինանսավորման բարձրացված չափաքանակ տրամադրելու հիմքերը⁷,
3. մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մակարդակը, ծավալները և տևողությունը:

Երեխայի գնահատման գործընթացն իրականացվում է կրթական յուրաքանչյուր աստիճանի առաջին տարում (առաջին, հինգերորդ և տասներորդ դասարաններում), ինչպես նաև՝ երբ երեխայի մոտ ուսումնառության ընթացքում, արտակարգ իրավիճակներով պայմանավորված, նկատվում են կայուն դժվարություններ⁸: Գնահա-

տումն իրականացվում է երկու փուլով.

1. դպրոցական մակարդակի գնահատում, որն իրականացվում է հաստատության ուսուցիչների և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից՝ բացահայտելու կրթության գործընթացում երեխայի արդյունավետ մասնակցության սահմանափակումները, դրանք առաջացնող միջավայրային խոչընդոտող գործոնները և դրանց հաղթահարման խթանիչ գործոնները:

2. տարածքային մակարդակի գնահատում, որն իրականացվում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից՝ որոշելու երեխայի մոտ այս կամ այն ֆունկցիայի խանգարման աստիճանը, և դրանով (կամ դրանցով) պայմանավորված՝ կրթության առանձնահատուկ պայմանի կարիքը:

Վկայագրված երեխայի առաջընթացը կամ հետընթացը գնահատելու համար յուրաքանչյուր տարի իրականացվում է վերագնահատում՝ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից՝ դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցության խմբի հետ համատեղ:

⁷ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, մաս 1, 10.7-րդ կետ:

⁸ «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ», ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.04. 2017թ. N370-Ա/2 հրամանի հավելված, 28-րդ կետ:



ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՅԱՏՈՒՄ. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ

10

Եթե կրթության ցանկացած փուլում երեխայի մոտ նկատվում են կայուն դժվարություններ, որոնք խանգարում են երեխային իր կարողությունների չափով մասնակցություն ունենալ ուսումնառության գործընթացում, ապա ուսուցիչը, համաձայնեցնելով երեխայի ծնողի հետ (հավելված 1, Ձև 1), գրավոր դիմում է դպրոցի տնօրենին՝ իրականացնելու երեխայի դպրոցական մակարդակի գնահատում: Գնահատումը սկսելուց առն-

վազն մեկ շաբաթ առաջ դպրոցի տնօրինությունը գրավոր տեղեկացնում է երեխայի ծնողին դպրոցական մակարդակի գնահատման նպատակների մասին: Ծնողի գրավոր համաձայնությունը ստանալու օրվանից 3-օրյա ժամկետում տնօրենի հրամանով հանձնարարվում է դպրոցի ուսուցիչներին և մանկավարժահոգեբանական աջակցության խմբին⁹ իրականացնել երեխայի դպրոցական մակարդակի գնահատում¹⁰:

⁹Դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամներ կարող են լինել երեխայի հետ աշխատող ուսուցիչները, ուսուցչի օգնականները, մասնագետները (հոգեբան, լոգոպեդ, հատուկ մանկավարժ, սոցիալական մանկավարժ և այլն) և երեխայի ծնողը: Դպրոցական մակարդակի գնահատում իրականացնող խմբի անդամների թիվը կախված է նրանից, թե որ ոլորտներում երեխան ունի դժվարություններ և ինչ մասնագետներ են անհրաժեշտ:

¹⁰«Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ», ԶՅ կրթության և գիտության նախարարի 13.04. 2017թ. N370-Ա/2 հրամանի հավելված, 34-36-րդ կետեր:

Դպրոցական մակարդակի գնահատումը սկսվում է ուսուցչի դիտարկումով, որը տեղի է ունենում երեխայի բնականոն միջավայրում՝ դասապրոցեսի ընթացքում, դասամիջոցին, արտադասարանական կամ արտադպրոցական միջոցառումների ժամանակ: Որպես դիտարկում իրականացնող գլխավոր անձ՝ համագործակցելով դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցության խմբի, դասավանդող այլ ուսուցիչների և աշակերտի ծնողների հետ, ուսուցիչը որոշակի ժամանակահատվածում, դիտարկման մեթոդի միջոցով, հավաքագրում է համապատասխան տեղեկատվություն երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, անձնային որակների, կարիքների ու դժվարությունների, ուժեղ կողմերի, հասակակիցների հետ փոխհարաբերությունների և այլի մասին: Երեխայի հնարավորությունների, կարիքների և զարգացման առկա մակարդակի դիտարկումը շատ կարևոր է նրա հետագա ուսումնառությունը պլանավորելու և կազմակերպելու համար: Գնահատման այս փուլը, որը ներառում է երեխայի ուսուցիչների և այլ մանկավարժահոգեբանական աշխատողների

կողմից դիտարկման արդյունքների ուսումնասիրությունն ու վերլուծությունը, տևում է 10-15 օր՝ ծնողի գրավոր դիմումի ընդունման օրվանից հաշված: Դիտարկման արդյունքների վերլուծության համար կիրառվում է ,Երեխայի գործունեության գնահատման գործիքը-ը (տե՛ս հավելված 2), իսկ արդյունքները արձանագրվում են ,Դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների գրանցման թերթիկե ձևաթղթում (տե՛ս հավելված 3): Եթե երեխայի դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների վերլուծությունը չի հանգում երեխայի մոտ որևէ ֆունկցիայի խանգարման, բայց երեխան մեկ կամ մի քանի ոլորտներում ունի թեթև դժվարություններ, ապա մանկավարժահոգեբանական աջակցության խումբը մշակում է ,Կանխարգելիչ միջամտությունների պլանե՛՝ կիսամյակային կտրվածքով ծառայությունների տրամադրման և միջավայրային հարմարեցումների վերաբերյալ (նպատակներ և դեպի այդ նպատակները տանող քայլեր, դասավանդման մեթոդներ, տեղի և դասասենյակի վերադասավորումներ, ժամանակի կազմակերպում և այլն, հավելված 4):



Քայլ 1

Անհանգստության շրջան



Քայլ 2

Դիտարկում



Քայլ 3

Երեխայի գործունեության գնահատման գործիքի կիրառում

Քայլ 4
Տարածքային մակարդակի գնահատում

Քայլ 5
Երեխայի գործունեության գնահատման գործիքի կրկնակի կիրառում

Քայլ 6
Կանխարգելիչ միջամտությունների պլանի կազմում

Եթե երեխայի գնահատման արդյունքների վերլուծությունը վկայում է երեխայի մոտ որևէ ֆունկցիայի խանգարման հավանականություն, ապա, երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի երկրորդ մակարդակի գնահատում իրականացնելու նպատակով¹¹, դպրոցը, ծնողի համաձայնության առկայությամբ, (հավելված 1, Ձև 2), տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն է ներկայացնում երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի երկրորդ մակարդակի գնահատման դիմումը՝ (հավելված 1, Ձև 3) կից փաստաթղթերով:

- երեխայի ծննդյան վկայականի և ծնողի անձնագրի պատճենները,
- երեխայի անձնական գործի պատճենը,
- երեխայի առողջական վիճակի մասին փաստաթուղթը,
- դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների գրանցման թերթիկը:
- կանխարգելիչ միջամտությունների պլանը՝ առկայության դեպքում:

Հաստատության տնօրինության կողմից դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո Տարածքային կենտրոնը նշանակում է երեխայի տարածքային մակարդակի գնահատումը սկսելու օրը՝ առավել


լագույնը 10-օրյա ժամկետում, որի մասին տեղեկացնում է դպրոցի տնօրինությանը:

Երեխայի տարածքային մակարդակի գնահատումն իրականացվում է որոշելու համար երեխայի մոտ այս կամ այն ֆունկցիայի խանգարման աստիճանը և դրանով (կամ դրանցով) պայմանավորված՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը: Եթե ծնողը համաձայն չէ տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից իր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի երկրորդ մակարդակի գնահատման արդյունքների հետ, ապա նա կարող է բողոքարկել և իր երեխային ներկայացնել հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն /հավելված 5/: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը ընթացք է տալիս երեխայի ծնողի գրավոր բողոքին՝ /կապված Տարածքային կենտրոնի կողմից իր երեխայի երկրորդ մակարդակի գնահատման արդյունքների հետ ունեցած իր անհամաձայնության/ այն ստանալու օրվանից առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերագնահատման գործընթացին չեն մասնակցում դպրոցական և տարածքային մակարդակների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մասնագետները և ուսուցիչները¹²:

¹¹«Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ», ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.04.2017թ. N370-Ա/2 հրամանի հավելված, 38-րդ կետ:

¹²«Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ», ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.04.2017թ. N370-Ա/2 հրամանի հավելված, 16, 20, 47, 49, 50-րդ կետեր:

ԵՐԵՒԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՅԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔ¹³



յուրաքանչյուր աստիճանի առաջին տարում (առաջին, հինգերորդ և տասներորդ դասարաններում): Այն կիրառվում է այն դեպքում, երբ դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցության խումբն ունի երեխայի հետ կապված մտահոգություններ և ծնողը գրավոր դիմում է դպրոցի տնօրենին, որպեսզի մանկավարժահոգեբանական աջակցության խումբը իրականացնի դպրոցական մակարդակի գնահատում: «Երեխայի գործունեության գնահատման գործիք»-ի միջոցով ամփոփվում են դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցության խմբի և ուսուցիչների դիտարկման արդյունքները:

Կարևոր է, որ ուսուցիչը կամ մանկավարժահոգեբանական աջակցության խումբը դիտարկման արդյունքում կարողանա պարզել, թե երեխան «Երեխայի գործունեության գնահատման գործիք»-ի որ ոլորտում կամ ոլորտներում ունի դժվարություն և բացահայտել աջակցության չափը:

Դպրոցական մակարդակի գնահատումը դիտարկման միջոցով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մասին բազմաբնույթ տեղեկությունների հավաքման, համակարգման և եզրահանգումներ կատարելու մի գործընթաց է, որի արդյունքում սահմանվում է, թե ինչ է անհրաժեշտ երեխային դպրոցում, դասարանում, տանը, համայնքում՝ հետագա զարգացման և անկախ լինելու համար: Դպրոցական մակարդակի գնահատում իրականացնելու համար Չանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից մշակվել է ուսումնական հաստատություններին է տրամադրվել «Երեխայի գործունեության գնահատման գործիք»-ը, որը թույլ է տալիս սահմանել այն ոլորտները, որտեղ երեխան ունի լրացուցիչ աջակցության կարիք, ինչպես նաև որոշել երեխայի ինքնուրույնության մակարդակը կամ պահանջվող աջակցության չափը: Գործիքը կիրառվում է երեխայի դպրոցական մակարդակի գնահատման ժամանակ՝ կրթական

Դպրոցների համար նախատեսված¹⁴, Երեխայի գործունեության գնահատման գործիքը բաղկացած է 20 բաժիններից.

1. Ըմբռնել հրահանգները և հետևել դրանց
2. Չարմարեցման կարողություն
3. Մասնակցելու և ակտիվ լինելու շահագրգռվածություն
4. Փոխհարաբերությունները հասակակիցների հետ
5. Ինքնասպասարկում
6. Խոշոր մոտորիկա՝ տեղաշարժում
7. Մանր մոտորիկա՝ դաստակի և ձեռքերի գործածում
8. Ուշադրություն
9. Հիշողություն
10. Հաղորդակցում
11. Ընտրություն կատարելու կարողություն
12. Կուլ տալու կարողություն

¹³Functional Assessment Measure (FAM) միջազգային գնահատման գործիքն է, որի 12 ոլորտները վերամշակվել և հարմարեցվել են 3-18 տարեկան երեխաների գործունեության գնահատման համար: Այս ձեռնարկում կցված է գործիքի դպրոցահասակ երեխաների համար նախատեսված տարբերակը: <https://www.kcl.ac.uk/nursing/departments/cicelysaunders/resources/tools/fimfam.aspx>

¹⁴«Երեխայի գործունեության գնահատման գործիք»-ը կիրառվում է նաև նախադպրոցական տարիքի երեխաների գործունեությունը գնահատելու համար: Այս դեպքում գործիքը ընդգրկում է երեխայի գործունեության 18 ոլորտ՝ բացառությամբ Կարդալու կարողություն, Գրելու կարողություն բաժինների:

13. Կարդալու կարողություն
14. Գրելու կարողություն
15. Խոսելու կարողություն
16. Մեքենայով փոխադրվել
17. Համայնքի մատչելիություն
18. Վարքի կառավարում
19. Կողմնորոշում
20. Ապահովության դատողություն

«Երեխայի գործունեության գնահատման գործիք»-ը նույն երեխայի համար կարող է կիրառվել երկու և ավելի անգամ. առաջին անգամ՝ որոշելու երեխայի դժվարությունը համապատասխան ոլորտում, ինչպես նաև որոշելու աջակցության չափը և աստիճանը, իսկ երկրորդ անգամ՝ աջակցությունները մատուցելուց հետո, պարզելու՝ արդյոք անհրաժեշտ է շարունակել աջակցությունը, թե՛ ոչ: Հարկ է նշել, որ գործիքի կիրառումը մեկ անձի կողմից կարող է բերել սուբյեկտիվ արդյունքի, ուստի, շատ կարևոր է ունենալ մի քանի կարծիքներ:


Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքը՝ մանկավարժահոգեբանական աջակցության խմբի բացակայության դեպքում դպրոցը, դպրոցական մակարդակի գնահատում իրականացնելու համար կարող է հրավիրվել տարածքային մանկավարժահոգեբանական աջակցման կենտրոնի համապատասխան մասնագետներին:

Գործիքը կիրառող մասնագետները պետք է կատարեն օբյեկտիվ գնահատում՝ բացառելով դրական կամ բացասական վերաբերմունքը երեխայի նկատմամբ:

Ինչպե՞ս կիրառել

Հաջորդաբար «ԱՅՈ» կամ «ՈՉ» պատասխանելով Երեխայի գործունեության գնահատման գործիքի յուրաքանչյուր ոլորտի հարցերին և շարժվելով ընտրված պատասխանի սլաքի ուղղությամբ՝ հանգում ենք ֆունկցիոնալության կամ աջակցության հետևյալ մակարդակներից որևէ մեկին:

Գործողությունների կամ աջակցության մակարդակների նկարագրություն



Եթե գործիքի կիրառման արդյունքը հանգում է լիակատար կամ ձևավորվող ինքնուրույնությունե վանդակներին, ապա տվյալ ոլորտում երեխան հավելյալ աջակցության կարիք չունի:

Եթե գործիքի կիրառման արդյունքը հանգում է վերահսկողությանե վանդակին, ապա արդյունքների գրանցման սանդղակում X նշանով նշվում է համապատասխան սյունակը: Այս դեպքում հավելյալ աջակցություն չի պահանջվում, սակայն երեխան գտնվում է ու-

սուցչի հսկողության ներքո:

Համարվում է, որ տվյալ ոլորտում երեխան ունի աջակցության կարիք, եթե գործիքի կիրառման արդյունքը հանգում է թեթև աջակցությունե, միջին աջակցությունե, մեծ հաճախականությամբ աջակցությունե կամ ամբողջական կամ մշտական աջակցությունե վանդակներին և արդյունքների գրանցման սանդղակում X-ով նշվում է աջակցության համապատասխան աստիճանը: Ստացված արդյունքները պետք է ամփոփվեն Դպրո-

ցական մակարդակի գնահատման արդյունքների գրանցման թերթիկե ձևաթղթում՝ աղյուսակի համապատասխան ոլորտի դիմաց՝ X-ով նշելով աջակցության աստիճանը /հավելված 3/: Գնահատման արդյունքները պարտադիր կերպով լրացվում են գործիքի բոլոր

20 ոլորտների համար:

Կիրառե՛ք Երեխայի գործունեության գնահատման գործիքը, այնուհետև ստուգեք մակարդակների նկարագրությունը հետևյալ նշումներով՝ հասկանալու համար, որ տրված գնահատականը ճիշտ է:

Լիակատար ինքնուրույնություն

Երեխան բոլոր նշված գործողությունները կատարում է սահմանված ժամանակահատվածում՝ առանց ձևափոխությունների և աջակցող հարմարանքների:

(Ոչ մի օգնություն, ոչ մի տեսակի հարմարանքներ և ժամանակի մեջ):

Ձևավորվող ինքնուրույնություն

Չետևյալ պնդումներից մեկը կամ մի քանիսը կարող են ճիշտ լինել.

- օգտագործում է աջակցող հարմարանք,
- սահմանված ժամանակից կարող է ավելի շատ ժամանակ պահանջվել,
- անվտանգության համար կարող են անհրաժեշտ լինել որոշ միջոցներ:

(Ոչ մի օգնություն, սակայն օգտագործում է մեկ աջակցող հարմարանք կամ ինդիք է առաջանում անվտանգության կամ ժամանակի ոչ բավարար լինելու հետ կապված):

Վերահսկողություն

Ստանում է ոչ ավելի, քան կողքից հուշում (վերբալ կամ ոչ վերբալ),

ԿԱՄ

օգնություն է ստանում պարզապես սարքավորումը կարգավորելու համար և այլն:

(Ոչ մի օգնություն, սակայն առկա է հարմարեցում կամ հուշում):

Թեթև աջակցություն

Ստանում է չնչին օգնություն՝ առաջադրանքն ավարտին հասցնելու համար - 75%-ից ավելին կատարում է ինքնուրույն:

(Օգնություն է ստանում միայն ուղղորդման ձևով):

Միջին աջակցություն

Ստանում է չափավոր օգնություն, սակայն կարողանում է ինքնուրույն կատարել առաջադրանքը 50-74%-ով:

(Օգնության կարիք ունի, սակայն առաջադրանքի կեսից ավելին կատարում է ինքնուրույն):

Մեծ հաճախականությամբ աջակցություն

Ստանում է բավականաչափ (նկատելի) օգնություն - կարողանում է ինքնուրույն կատարել առաջադրանքը 25-49%-ով:

(Առաջադրանքի կեսից քիչ է կատարում ինքնուրույն, սակայն ջանք է գործադրում այն կատարելու համար):

Ամբողջական կամ մշտական աջակցություն

Ստանում է լիակատար աջակցություն ՎՆ առաջադրանքը կարողանում է կատարել 25%-ից ոչ ավելի, կամ առաջադրանքը չի կատարվում:

(Անկարող է կամ շատ քիչ է կարողանում կատարել առաջադրանքը - 25%-ից քիչ):



ՀԱՎԵԼՎԱԾ

16 |

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՓԱԹԵԹ

ԾՆՈՂԻ ՀԵՏ ԵՐԵԽԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հարգելի ծնող,

_____ դպրոցի մանկավարժահոգեբանական խմբի անդամները և ուսուցիչները Ձեր երեխայի՝ _____ ի կրթությունն առավել արդյունավետ և որակյալ կազմակերպելու նպատակով առաջարկ են ներկայացրել իրականացնելու դպրոցական մակարդակի գնահատում: Ձեր գրավոր թույլտվությունն անհրաժեշտ է, որպեսզի մեր դպրոցի մանկավարժահոգեբանական խմբի անդամները և ձեր երեխայի ուսուցիչները Ձեզ հետ միասին գնահատեն Ձեր երեխայի ուժեղ և թույլ կողմերը և, հենվելով նրա ուժեղ կողմերի վրա, առավել արդյունավետ կազմակերպեն նրա կրթության գործընթացը: Դպրոցական մակարդակի գնահատման ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը կպահվի գաղտնի և առանց Ձեր գրավոր համաձայնության չի կարող տրամադրվել երրորդ կողմի: Դպրոցական մակարդակի գնահատման արդյունքում Ձեր երեխայի կրթական ծրագրերում ոչ մի փոփոխություն չի նախատեսվում: Անհրաժեշտության դեպքում, Ձեր համաձայնությամբ, հնարավոր է, որ Ձեր երեխային առաջարկվի տրամադրել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություն՝ դպրոցի մանկավարժահոգեբանական խմբի կողմից: Դպրոցական մակարդակի գնահատման արդյունքներին կծանոթանաք Ձեր գրավոր թույլտվությունը դպրոցի կողմից ստանալուց ոչ ուշ, քան 21 օր հետո:

Նամակի վերջում Ձեր գրավոր պատասխանի տիպային օրինակում խնդրում ենք նշել՝ ,Տալիս եմ իմ համաձայնությունը կամ ,Չեմ տալիս իմ համաձայնությունը տարբերակներից մեկը, նշեք Ձեր անունը, ազգանունը և ստորագրեք ու 2 օրվա ընթացքում այն ներկայացրեք դպրոցի տնօրենին:

_____ դպրոցի տնօրեն՝

(անուն, ազգանուն, ստորագրություն)

Տեղեկացված եմ, որ առանց իմ թույլտվության երեխայիս չեն կարող գնահատել: Գիտեմ նաև, որ իմ համաձայնությունը կարող եմ չեղյալ համարել ցանկացած ժամանակ: Տալիս եմ իմ համաձայնությունը / Չեմ տալիս իմ համաձայնությունը՝ իրականացնելու երեխայիս ուժեղ և թույլ կողմերի դպրոցական մակարդակի գնահատում:


Ծնողի անուն, ազգանուն՝ _____

Ստորագրություն _____ Ամիս, ամսաթիվ _____

ԵՐԵԱՎՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՅԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔ


Ըմբռնել հրահանգները և հետևել դրանց

Լիակատար ինքնուրույնություն —> Հասկանալ և կատարել հանձնարարությունները:




Հարմարվելու կարողություն

Լիակատար ինքնուրույնություն → Հարմարվել փոփոխություններին, անցումային իրավիճակներին, իրադարձություններին և նոր միջավայրին:




Մասնակցելու և ակտիվ լինելու շահագրգռվածություն

Լիակատար ինքնուրույնություն → Նպատակասլաց և հաստատակամ լինել դժվարին իրավիճակներում: Ինքնավստահություն զգալ հաջողության դեպքում և հպարտանալ սեփական նվաճումներով:




Փոխհարաբերությունները հասակակիցների հետ

Լիակատար ինքնուրույնություն → Հաստատել և պահպանել հարաբերություններ հասակակիցների հետ, արձագանքել զգացմունքներին, օգտվել միևնույն առարկայից կամ խաղալ նրանց հետ:




Ինքնասպասարկում

Լիակատար ինքնուրույնություն —> Տարիքին համապատասխան սպասարկել ինքն իրեն գործունեության տարբեր ոլորտներում (օրինակ, օգտվել զուգարանից, ուտել, խմել և այլն):




խոշոր մոտորիկա՝ տեղաշարժում

Լիակատար ինքնուրույնություն → Դրսևորել խոշոր մոտորիկայի ընդհանուր կարողություններ, պահել հավասարակշռությունը քայլելիս, վազելիս, աստիճաններով բարձրանալիս և իջնելիս:




Մանր մոտորիկա՝ դաստակի և ձեռքերի գործածում

Լիակատար ինքնուրույնություն —> Վերցնել և վեր բարձրացնել, ձգել կամ հրել առարկաները, կոճկել և արձակել կոճակները, նետել կամ բռնել գնդակը:




Ուշադրություն

Լիակատար ինքնուրույնություն → Դրսևորել ուշադրության տեղափոխելիություն, կենտրոնացում և պահպանում:




Հիշողություն

Լիակատար ինքնուրույնություն → Մտապահել և վերարտադրել որոշակի տեղեկատվություն:




Հաղորդակցում

Լիակատար ինքնուրույնություն → Արտահայտել մտքեր և կարծիքներ՝ գործածելով խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման ձևեր:



Ընտրություն կատարելու կարողություն


Լիակատար ինքնուրույնություն —> Կարողանում է առաջարկված տարբերակներից կատարել ընտրություն (առարկաներ, գործողություններ, միջավայր, կերակրատեսակներ և այլն):



Կուլ տալու կարողություն


/սնունդը անվտանգ կերպով բերանով ուտելու կարողություն/

Լիակատար ինքնուրույնություն → Կարողանում է կանոնավոր ուտել սնունդն իր ընտրությամբ՝ խելամիտ ժամանակահատվածում:




Կարդալու կարողություն

Լիակատար ինքնուրույնություն —> Կարողանում է կարդալ և ամբողջությամբ հասկանալ ու հիշել բարդ, երկար պարբերությունները (թերթեր, գրքեր և այլն) խելամիտ ժամանակահատվածում:




Գրելու կարողություն

Լիակատար ինքնուրույնություն → Գրավոր խոսքի տիրապետում, որը ներառում է ուղղագրությունը, քերականությունը և գրավոր հաղորդակցման ամբողջականությունը՝ խելամիտ ժամանակահատվածում:



Խոսելու կարողություն

Լիակատար ինքնուրույնություն —> Լիարժեք հասկանալի խոսք, որը ներառում է հնչարտաբերումը, խոսքի տեմպն ու ռիթմը, խոսքային հաղորդակցման որակը:




Մեքենայով փոխադրվել

Լիակատար ինքնուրույնություն → Մեքենային մոտենալը, մեքենայի դուռը բացելը և փակելը, մեքենան նստելը և մեքենայից իջնելը, ամրագոտիների օգտագործումը:




Համայնքի մատչելիություն

Լիակատար ինքնուրույնություն —> Համայնքի մատչելիությունը ներառում է հանրային տրանսպորտային միջոցներից օգտվելու կարողությունը, այդ թվում երթուղին պլանավորելը, ժամանակը կառավարելը, ուղեվարձը վճարելը, միջավայրային խոչընդոտները հաղթահարելը:




Վարքի կառավարում

Լիակատար ինքնուրույնություն → Կառավարել սեփական վարքագիծը, դրսևորել միջավայրի կանոններին համապատասխան վարքագիծ, վերահսկել իմպուլսիվ վարքը:




Կողմնորոշում

Լիակատար ինքնուրույնություն —> Իր մեջ ներառում է հետևողական կողմնորոշումը անձի, վայրի, ժամանակի և իրավիճակի մեջ՝ առանց որևէ հուշման:



Ապահովության դատողություն

Լիակատար ինքնուրույնություն → Իր մեջ ներառում է իրավիճակի մեջ կողմնորոշումը, ապագան պլանավորելու կարողությունը, անվտանգության հետ կապված տեղեկատվությունը հիշելու և վտանգի դեպքում համապատասխանաբար արձագանքելու կարողությունը:



Դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների գրանցման թերթիկ

Սովորողի անուն, հայրանուն, ազգանուն՝ _____
 Ծննդյան օր, ամիս, տարի՝ _____ ծննդյան վկայական N _____
 Ուսումնական հաստատության անվանումը՝ _____ Դասարան՝ _____
 Լրացման ամսաթիվ՝ _____

«X»-ով նշե՛ք «Երեխայի գործունեության գնահատման գործիք»-ի արդյունքները.

	Բաժիններ	Լիակատար ինքնությունություն	Ձևավորվող ինքնությունություն	Հսկողություն	Թեթև աջակցություն	Միջին աջակցություն	Մեծ հաճախականությամբ աջակցություն	Անբողջական կամ սշտական աջակցություն
1	Ըմբռնել հրահանգները և հետևել դրանց							
2	Հարմարվելու կարողություն							
3	Մասնակցելու և ակտիվ լինելու շահագրգռվածություն							
4	Փոխհարաբերությունները հասակակիցների հետ							
5	Ինքնասպասարկում							
6	Խոշոր մոտորիկա՝ տեղաշարժում							
7	Մանր մոտորիկա՝ դաստակի և ձեռքերի գործածում							
8	Ուշադրություն							
9	Հիշողություն							
10	Հաղորդակցում							
11	Ընտրություն կատարելու կարողություն							
12	Կուլ տալու կարողություն							
13	Կարդալու կարողություն							
14	Գրելու կարողություն							
15	Խոսելու կարողություն							
16	Մեքենայով փոխադրվել							
17	Համայնքի մատչելիություն							
18	Վարքի կառավարում							
19	Կողմնորոշում							
20	Ապահովության դատողություն							

Խնդրում ենք նկարագրել սովորողի կատարողականությունը, ուժեղ և թույլ կողմերը՝ հաշվի առնելով առաջին մակարդակի գնահատման արդյունքում ստացված տվյալները:

1. Ըմբռնել հրահանգները և հետևել դրանց _____

2. Հարմարվելու կարողություն _____

3. Մասնակցելու և ակտիվ լինելու շահագրգռվածություն _____

4. Փոխհարաբերությունները հասակակիցների հետ _____

5. Ինքնասպասարկում _____

6. Խոշոր մոտորիկա՝ տեղաշարժում _____

7. Մանր մոտորիկա՝ դաստակի և ձեռքերի գործածում _____

8. Ուշադրություն _____

9. Հիշողություն _____

10. Հաղորդակցում _____

11. Ընտրություն կատարելու կարողություն _____

12. Կուլ տալու կարողություն _____

13. Կարդալու կարողություն _____

14. Գրելու կարողություն _____

15. Խոսելու կարողություն _____

16. Մեքենայով փոխադրվել _____

17. Համայնքի մատչելիություն _____

18. Վարքի կառավարում _____

19. Կողմնորոշում _____

20. Ապահովության դատողություն _____

Ստորագրություններ՝

ծնող՝
 դասվար/ դասղեկ՝
 ուսուցիչներ/ մասնագետներ՝

_____	_____	_____
_____	_____	_____
_____	_____	_____
_____	_____	_____

պաշտոն

ստորագրություն

անուն, ազգանուն

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ N_____

Աշակերտի անուն, ազգանուն՝ _____

Ծննդյան ամիս ամսաթիվ՝ _____

Դպրոց՝ _____ դասարան՝ _____

ուսուցիչ՝ _____

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի ոլորտը /և/չէլ բոլոր համապատասխան ոլորտները/.

Ըմբռնել հրահանգները և հետևել դրանց		Ընտրություն կատարելու կարողություն	
Հարմարեցման կարողություն		Կուլ տալու կարողություն	
Մասնակցելու և ակտիվ լինելու շահագրգռվածություն		Կարողալու կարողություն	
Փոխհարաբերությունները հասակակիցների հետ		Գրելու կարողություն	
Ինքնասպասարկում		Խոսելու կարողություն	
Խոշոր մոտորիկա՝տեղաշարժում		Մեքենայով փոխադրվել	
Մանր մոտորիկա՝ դաստակի և ձեռքերի գործածում		Համայնքի մատչելիություն	
Ուշադրություն		Վարքի կառավարում	
Հիշողություն		Կողմնորոշում	
Հաղորդակցում		Ապահովության դատողություն	

Պլանը կազմելու ամսաթիվ _____ վերանայման ամսաթիվ _____

/պլանը կազմվում է մեկ կիսամյակի համար/

Նպատակներ և քայլեր, որոնք ուղղված են աջակցություն պահանջող ուլորտի զարգացմանը	Ռազմավարություն /կյութեր, մեթոդներ, հնարներ, հարմարեցումներ/	Պատասխանատուներ /անուն, ազգանուն, պաշտոն/	Նվաճումներ			
			Այո	Ոչ	Մասամբ	Ամսաթիվ
Նպատակ 1.						
1.1.						
1.2.						
1.3.						
Նպատակ 2.						
2.1.						
2.2.						
2.3.						
Նպատակ 3.						
3.1.						
3.2.						
3.3.						

Անհրաժեշտ միջավայրային հարմարեցումներ

Դասարանում	
Դպրոցում	
Տանը	

Կանխարգելիչ միջամտությունների պլանը կազմող ՄՅ աշակցության թիմ՝

ծնող՝ դասվար/ դասղեկ՝ ուսուցիչներ/ մասնագետներ՝	_____ _____ _____ _____ _____	_____ _____ _____ _____ _____	_____ _____ _____ _____ _____
	պաշտոն	ստորագրություն	անուն, ազգանուն

ԵՐԵԽԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱԿԱՏՄԱՆ ԾԱՆՈՒԹՈՒՄ

Վայր, ամիս, ամսաթիվ

Չարգելի ծնող,

-----դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցության խմբի և ուսուցիչների կողմից, Ձեր մասնակցությամբ, իրականացվեց Ձեր երեխայի՝ _____ի, դպրոցական մակարդակի գնահատում: Դպրոցական մակարդակի գնահատման արդյունքում պարզվեց, որ կարիք կա իրականացնելու Ձեր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում, որի համար անհրաժեշտ է Ձեր գրավոր համաձայնությունը: Տեղեկացնում ենք, որ առանց Ձեր համաձայնության Ձեր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում չի իրականացվի: Դուք իրավունք ունեք մասնակցելու գնահատման գործընթացին և տալ Ձեր վերջնական համաձայնությունը կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման եզրակացությանը: Տեղեկացնում ենք, որ գնահատման արդյունքում, եթե ճանաչվի Ձեր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը, ապա Ձեր համաձայնությամբ այն պետք է վկայագրվի համապատասխան ընթացակարգով: Տեղեկացնում ենք նաև, որ Ձեր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքներին համաձայն չլինելու դեպքում Դուք կարող եք դրանք բողոքարկել Չանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնին:

_____ դպրոցի տնօրեն՝

(անուն, ազգանուն, ստորագրություն)

Կ.Տ

**ԵՐԵՒԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԱՐԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ
ԴԻՄՈՒՄ**

1. Երեխայի անուն, ազգանուն, հայրանուն՝ _____
2. Ծննդյան օր, ամիս, տարի՝ _____ / _____ / _____
3. Դպրոց, դասարան՝ _____
4. Հասցե, հեռախոս՝ _____
5. Տարածքային մակարդակի Գնահատման ներկայացրած հանրակրթական ուսումնական հաստատություն՝ _____
6. Երեխայի ծնողի անուն, ազգանուն՝ _____
7. Դիմումի ներկայացման ամսաթիվ՝ _____ / _____ / _____
8. Դպրոցի տնօրենի դիմում՝ _____

Հիմք ընդունելով _____ դպրոցի _____ դասարանի աշակերտ՝ _____ ի ծնողի (երեխայի ծնողի կամ օրինական ներկայացուցչի անուն, ազգանուն)՝ _____ ի գրավոր համաձայնությունը, հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժահոգեբանական աջակցության խումբը իրականացրել է _____ ի դպրոցական մակարդակի գնահատում: Սույն դիմումին կից դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների վերլուծությունը վկայում է, որ կարիք կա իրականացնել _____ ի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի տարածքային մակարդակի գնահատում: Ուստի խնդրում եմ սահմանված կարգով իրականացնել _____ ի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի տարածքային մակարդակի գնահատումը:

Հանրակրթական դպրոցի տնօրեն՝ _____
Ամսաթիվ՝ _____ / _____ / _____ Կ.Տ

9. Երեխայի ծնողի համաձայնություն՝ _____

Ես՝ _____ ս, տեղեկացված եմ, որ առանց իմ թույլտվության երեխայիս կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը չի կարող գնահատվել, և որ իմ համաձայնությունը կարող եմ չեղյալ համարել ցանկացած ժամանակ: Տալիս եմ իմ համաձայնությունը՝ իրականացնելու երեխայիս՝ _____ ի, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի տարածքային մակարդակի գնահատումը:

Ծնողի անուն, ազգանուն, ստորագրություն _____

ԵՐԵՒԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԳՆԱԿԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԴԻՄՈՒՄ

1. Երեխայի անուն, ազգանուն, հայրանուն՝ _____
2. Ծննդյան օր, ամիս, տարի՝ _____ / _____ / _____
3. Հասցե, հեռախոս՝ _____
4. Երեխայի ծնողի անուն, ազգանուն՝ _____

5. Երեխայի ծնողի համաձայնություն՝

Ես՝ _____ ս, տեղեկացված եմ, որ առանց իմ թույլտվության երեխայիս կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը չի կարող գնահատվել, և որ իմ համաձայնությունը կարող եմ չեղյալ համարել ցանկացած ժամանակ: Տալիս եմ իմ համաձայնությունը՝ իրականացնելու երեխայիս՝ _____ ի, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի տարածքային մակարդակի գնահատումը:

Ծնողի անուն, ազգանուն, ստորագրություն _____

Դիմումի ներկայացման ամսաթիվ՝ _____ / _____ / _____

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն (մարդիկ, թվեր, փաստեր), Հատուկ կրթության գիտամեթոդական տեղեկատու.- Մաս 5. ՎՆ Եր.: 2011.-108էջ
2. Խոսքը ներառման մասին Է. Հաշմանդամություն ունեցող երեխաների համար կրթական, առողջապահական և սոցիալական պաշտպանության ծառայությունների մատչելիությունը Հայաստանում. - Եր.: . ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, 2012.
3. Կրթության կազմակերպման մանկավարժահոգե-բանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ (հաստատված ՀՀ ԿԳ նախարարի 2014թ-ի ապրիլի 13-ի N370-Ն հրամանով):
4. ՀՀ Ազգային ժողովի 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ,Հանրակրթության մասին ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենք (ՀՕ-200-Ն) <http://edu.am/index.php/am/about/view/107>
5. Ներառական կրթություն. ուսումնամեթոդական ուղեցույց: Ձեռնարկ. ՎՆ Եր.: ,Հուլիսի կամուրջե ՀԿ, 2015.-200 էջ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱԳԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԳՆԱԳԱՏՈՒՄԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ձ Ե Ղ Ն Ա Ր Կ

